

Կազմված է «20» «12» 2019թ.
Բաղկացած է 14 (տասնչորս) թերթից
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Արցախի հեղափոխական
կուսակցության 20.12.2019թ. կայացած
հիմնադիր համագումարի որոշմամբ
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝

Arun

Ա.Օսիպյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ «20» «01» 2020թ

Գրանցման համար 443.172.1110547

ՀՎՀՀ 90046287

Գործակալության պետ՝ Գ.Մաքսիմովա



ԱՐՑԱԽԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ք. Ստեփանակերտ, 2019թ.

1.5. Մասնավոր հատվածը ընդգրկում է գյուղատնտեսության, անասնաբուծության, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների այն մասը, որոնք լրացնում են պետական և կորպորատիվ ոլորտների տնտեսական գործունեությունը:

1.6. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բանկային համակարգին: Հաշվի առնելով շուկայի սահմանափակ լինելը և արտահանման համար անբարենպաստ աշխարհագրական դիրքը, Ղարաբաղում գրեթե անհնար է դառնում արտադրություն հիմնելը, հարկերի և վարկերի տիեզերական տոկոսներ վճարելը: Համաշխարհային ճգնաժամի տարիներին դոլարով վարկերի տրամադրումը պետության թույլ տված բացթողումն է, որի պատճառով բնակչության մեծ մասը պարտքի փոսի մեջ ընկավ, որից առ այսօր չի կարողանում դուրս գալ: Հարցը նրանում է, որ կապիտալիստական համակարգում ճգնաժամը պարբերական բնույթ է կրում, որը կրկնվում է յուրաքանչյուր 10-14 տարին մեկ: Մեր քաղաքացիներից շատերը, չլինելով բավարար տեղեկացված և նկատելով դոլարի անկման միտումը, համաձայնեցին վարկ վերցնել ամերիկյան արժույթով: Եվ դրա մեջ չի կարելի մեղադրել ժողովրդին, քանի որ ոչ բոլորն են տնտեսագիտական գիտելիքներով օժտված, և մեծ հաշվով պարտավոր էլ չեն: Բայց երկրի ղեկավարությունը պարտավոր էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի իր քաղաքացիները չընկնեն ծուղակի մեջ, այլ ոչ թե ամբողջ մեղքը բարդեր ժողովրդի վրա: Մենք չենք խոսում այն բացառությունների մասին, երբ առանձին քաղաքացիներ ընկել են մեծ պարտքերի տակ՝ փող վատնելով շքեղության ու զվարճանքի վրա: Սա 10, 20, 200 մարդու հարց չէ, մենք խոսում ենք մեր հազարավոր ու տասնյակ հազարավոր քաղաքացիների մասին, իսկ սա արդեն համակարգային բնույթի խնդիրներ է առաջադրում, որոնք պետք է լուծվեն համակարգի արմատական վերափոխմամբ: Մենք խոսում ենք այն մարդկանց մասին, որոնց պետությունը չի թողել այլ տարբերակներ՝ լուծելու համար բնակարանային, բուժման, ուսման և հացի փող վաստակելու հարցերը: ԵՎ սա իշխանությունների մեղքն է, որոնք սատարում են ներկայիս տնտեսական մոդելին, նաև բանկերի մեղքն է: Մեղավորները ոչ թե հասարակ մարդիկ են, ովքեր արյուն են թափել ու դեռ թափում են՝ պաշտպանելով իրենց տներում ապրելու իրավունքը, այլ բանկերն են, որոնք սխալ գործունեություն են իրականացնում: Իրականում, Արցախը կանգնած է կա՛մ լայն բանկային ամնիստիայի կա՛մ զանգվածային արտագաղթի ընտրության առջև: Վերջինս անընդունելի է ցանկացած պարագայում: Հետևաբար, Կուսակցությունը հայտարարում է անզիջում պայքար բանկերի սխալ գործունեության դեմ, և ժողովրդի աջակցությամբ լիակատար համաներում կիրականացնի նրանց համար, ովքեր դարձել են վաշխառուական համակարգի զոհ: Կուսակցությունը հաշվարկել է բոլոր ռիսկերը, նույնիսկ եթե խոսքը գնա բանկերի Հանրապետության ամբողջական դադարեցման մասին: Տարածված կարծիք կա, որ այս դեպքում կունենանք տնտեսական կոլապս: Բայց դա այդպես չէ: Քանի որ այդ ժամանակ պետությունն ինքն է դառնալու տնտեսության դոնոր և չի ապավինելու մասնավոր ֆինանսական հաստատություններին և դրսից ներդրումների վրա, որոնք ամենից հաճախ իրականացվում են գերշահույթներ ստանալու նպատակով: Նրանք ասում են նաև, որ բանկային համակարգի վարած սխալ քաղաքականության դեմ բողոքի ցույցերը կհանգեցնեն պատասխան գործողությունների այն մեծ ֆինանսական հաստատությունների կողմից, որոնք ուժեղ ազդեցություն ունեն աշխարհում: Բայց հաշվի առնելով շարունակվող զլոբալ գործընթացները, տնտեսական պատերազմները, որոնցում խոսք է գնում հարյուր միլիարդավոր դոլարների մասին,